

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ՓԱՐԱՎՈՆՅԱՆ ԳԵՂԱԴԻՏԱԿԸ

Posted on July 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Խալաթյան, Երևան, 8 հունիս 2022

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության որոշումներով, «Նահապետ» հրատարակչության կողմից, հրատարակվել է «Դիմանկարը Փարավոն Միրզոյանի արվեստում» մեծաշուք պատկերագիրը՝ ՀՀ ժողովրդական նկարչի շուրջ 200 դիմանկարներով:

Նկատենք, որ ի դեմս գլխավոր խմբագիր և հրատարակիչ Սեն Հովհաննիսյանի, գեղարվեստական ձևավորող Սեդա Հովհաննիսյանի, լուսանկարիչ, արվեստագիտության թեկնածու Մանե Մկրտչյանի, Մարիամ Դավթյանի, Զրիստինե Սարգսյանի և Սրապիոն Մարդանյանի, ռուսերենի և անգլերենի թարգմանիչ Սվետլանա Մարդանյանի, տեխ. խմբագիր Զրիստինե Սարգսյանի և «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրիչների, լույս է տեսել բարձրաճաշակ, բազմակերպ մի գիրք, որի տպագրական որակն ու գեղագիտական բովանդակությունը ամենաքմահաճ դիտողին անգամ ավելին ցանկանալու տեղիք չի տա:

Նշանակալից երևույթ է այս հրատարակությունը՝ ականավոր արվեստագետի

տանայնվրա գտնվող համայնքային կենտրոնի մասին
 ներկայացմամբ, ու նաև նրանով,
 որ պատկերագրի հավաքածուն
 ի դերն է բերում դիմակերտման
 ժանրում արվեստագետի
 ստեղծագործական
 զարգացումների
 վերափոխումները՝ հոգեբանական
 արտահայտչականությամբ
 հագեցած
 ռեալիստականությունից մինչև
 մոդեռնիստական վերացարկմամբ
 ստեղծված կտավները: Դրանք
 իրենց գեղագիտական
 բազմախոսությամբ ու
 արտահայտչականությամբ
 ներկայացնում են
 ժամանակակիցների
 ներաշխարհային կերտվածքները:
*«Գեղարվեստորեն համոզիչ այդ
 կերպարներն իրենց ժամանակի
 խնդիրներով խոր
 մտահոգությունների և
 ոգեղենության կրողներն են»*, -
 իրավամբ նկատում է
 պատկերագրի գրախոս,
 արվեստագիտության թեկնածու
 Մարգարիտա Զամայանը:



Նմանօրինակ պատկերագրերի մասին, սովորաբար, գրախոսություններ չեն գրվում,
 քանզի բնօրինակ կտավների լուսանկարչական-տպագրական պատկերները, որքան էլ
 լավորակ, չեն կարող լիովին ներկայացնել արվեստագետի ստեղծագործական այն
 բոլոր նրբությունները, որոնցով հյուսվում և արժեքավորվում է ստեղծագործությունը:
 Սակայն, հավակնում եմ հակիրճ խոսք ասել, քանզի քաջածանոթ եմ Փարավոն
 Միրզոյանի դիմանկարային ժանրի բազմաթիվ բնօրինակների, ավելին,
 բարեբախտություն եմ ունեցել ներկա լինելու դրանցից մի քանիսի
«ծննդաբանությանը»: Ուստի, ընտրեցի երեք գործ, որոնք ոճական առումով կարող են
 պատկերագրի բազմազանության ներկայացուցիչներ համարվել:

«Իմ Մայրը». 1975-76 թթ. երկնած այս մեծադիր, ռեալիստական ոճով, յուղաներկ

ստեղծագործությունն, իրավամբ, արվեստագետի անցած բեղմնավոր ուղու գազափարագեղագիտական ամբողջականության «սկիզբն երկանցը» կարելի է համարել: Ծննդավայրի՝ հայրենի Սալվարո գյուղի ջլապինո լեռների և ափահարող դաշտերի երկնաշատ համայնապատկերում, սարալանջին, ուխտավորի պես բոկոտն կանգնած է երիտասարդ երեխամայրը՝ մանուկը գրկին: Լեռնային քամուց մարմնին սեղմված, բարեկազմությունն ընդգծող անզարդ, ծածանվող քղանցքներով ճերմակ զգեստը, նույն ճերմակի նուրբ երանգներով շապկանց մանուկը, նրանց նայվածքի արտահայտիչ խոհականությունը Աստվածամոր հարագոյության յուրօրինակ խորհրդանիշ են դարձել՝ որդուն աշխարհին նվիրաբերելու մայրական հայացքի մտահոգ խորությամբ ու մանկան՝ հրճվալից, վճիտ, զարմանքով լի հայացքի գրավչությամբ: Այս հմայիչ պատկերի շարունակությունը մենք գիտենք. ուր-որ է մայրը ցած կբերի որդուն և մանուկը կքայլի իր Արարչատու բախտին ընդառաջ, դեպի գեղեցիկի, վեհի արարումների աշխարհ:

Նրա հետ գնանք այդ աշխարհի բավիղներով և բազմաթիվ ոյութական պահեր ապրելուց հետո կանգ առնենք «Իմ անկյունը» կտավի առջև: Բայց մեզ չի հաջողվի



«կանգ առնել», պատկերն անմիջապես մեզ ներս կբերի դեպի գեղանկարչի «անկյունը», որտեղ, մեջքով դեպի մեզ, մերկ իրանով նստած բնորոշուհին է և նրան հառված նկարիչը՝ աշխատանքի պահին:

Փարավոն Միրզոյանի ռեալիստականությունն այստեղ տեղի է տվել խորհրդանշային ոճին, կտավի առերևույթ գունաբաժանումը շեշտված է ի հայտ բերելու կնոջ լուսավոր ու տաք էությունը: Նրան հառված նկարիչը պատկերված է դարչնագույնի երանգավորմամբ, աջակողմյան ներքևում սևաթույր ինտերիեր է, վերևում կարմրակերպ շերտատիպ ֆոն և բոլոր այդ ամենն իր շուրջը բոլորած շիկահեր, մարմարյա, լուսաթույր հերոսուհին՝ սավանով կիսածածկված: Նրանով գերված, նրան հառված վարպետը դիմակերտում է՝ չիմանալով, չգուշակելով, թե ի՞նչ գեղեցիկ է բնորդուհու լուսաբուխ թիկունքն ու իրանը: Փարավոնի վրձնած կանացի մեջքերի լեգենդը նկարչարվեստում վաղուց է հայտնի և սա էլ, թերևս, դրանց շարքում է, բայց արդեն իր գաղտնախորհուրդ խորհրդանշային «լրացումներով», որոնք ներկայանում են «լույսից դուրս» ինտերիերի հատվածում նշմարվող «իգական ու արական» կուժ-կուլայով, եզրից երկնագույն ծորող, ներկապնակ հիշեցնող սկուտեղի կարմիր խնձորներով, վերջապես, կտավի աջակողմ վերին հատվածում խոյահար թևաբախման կարմրատեսիլքով, որը նկարչի ստեղծագործական ներշնչանքի ալեկոծությունների և կամ, գուցե, քիչ առաջ ապրված զգացումների չմարած խորհրդանիշն է, մանավանդ որ, անկողնային սավանն ու հերոսուհու անխնամ սանրվածքը մտքեր են հուշում...

Դիմանկարային ժանրում խմբային և երկկերպարներ պատկերելը Փարավոն Միրզոյանի նախընտրած ձևերից է: Դրանք, որպես կանոն, ամփոփում են սյուժետային լիցք ու բովանդակություն և ստեղծագործությունը ներկայացնում որպես պատում: Այդ տեսակետից անընդգրկելի հզոր լիցք է պարունակում 2021 թ.-ին ստեղծած «Մղձավանջ» մեծադիր կտավը:



Առանց երկմտելու կարելի է ասել, որ Պիկասոյի «Գեռնիկայից» հետո, անցած 85 տարիների ընթացքում, համաշխարհային կերպարվեստում հակապատերազմական, սրբություններն ու մարդեղենությունը ոտնակոխելու և նախճիրի ողբերգականության թեմատիկայով այնպիսի հզոր գործ չի ստեղծվել, ինչպիսին Փարավոն Միրզոյանի «Մղձավանջ» կտավն է: Այն արարվել է Արցախյան 44-օրյա պատերազմի ազդեցությամբ: Հիրավի, այդ պատերազմը յուրաքանչյուր հայի համար ցայսօր էլ մղձավանջ է ներկայանում, որի գեղարվեստական խտացումը պայթյունի պես հառնում է անմեղության ու անմեղ զոհերի նախճիրի տեսարանով, վայրենի եղեռնագործների գազանային մոլուցքով:

«Մղձավանջում» կերպարները այլաբերորեն են ներկայացված, մարդուն՝ հեռավոր նմանությամբ, քանզի այդ էակները դժոխք ստեղծող ճիվաղներ են, իսկ նրանց զոհերը՝ նախճիրից հոգեկան հավասարակշռությունը կորցրած էակներ: Սակայն, ստեղծագործության մանրամասների քննարկումը թողնենք մեկ ուրիշ անգամի, հաշվի առնելով, որ այդ ողբերգության կրողներս դեռևս դրա ծանր ազդեցության տակ ենք, և մեր իրականության հակահերոսների էության գեղարվեստական կերպավորման վերլուծությունը, բոլոր դեպքերում, ավելի նվազ կլինի, քան՝ գեղարվեստի միջոցով նկարչի հաղորդածը:

Խոսքս ցանկանում եմ ավարտել նորահրատ պատկերագրի այցեքարտը հանդիսացող «Ինքնանկարի» հիշատակմամբ:

Փարավոն Միրզոյանն իրեն պատկերել է առինքնող ազնվականի կերպարով: Ասպետականությունը, որ բնորոշ է նաև նրա մյուս ինքնանկարներում, այստեղ արտահայտվում է նաև իմաստասիրական խորըմբռնման դրոշմով: Ազնվական այրը Մեծ գաղտնիքն իմացողի հայացքով նայում է դիտողին՝ շղթայիկով ժամացույցը աջ ձեռքով բռնած, փոքր ինչ հուշադրաբար, թույլ ցուցադրականությամբ: Ի՞նչ է ասում նրա հայացքը՝ նայիր ժամացույցի՞ն... ո՛չ, ժամացույցը, խորհրդանիշ է, ժամանակի՝ խորհրդանիշը:



Կյանքի

խելահեղության, արարումների ու կործանումների, սիրո և ատելության,
սքանչելիության ու հիասթափությունների խորախորհուրդը ժամանակի մեջ է:

Թերթելով գրքի էջերը, այդ խոհերով ես փակում այն ու կրկին հանդիպելով գրաշապկից
սևեռված նկարչի հայացքին, ականա արտաբերում ես.

-ինքդ ասացիր:

Բառացանկ

Ինստիտուտ - հաստատություն, հիմնարկ, կեդրոն,
Հումանիզմ - մարդասիրություն, մարդկայնականություն
Պրոբլեմ - խնդիր, հարց
Ակադեմիա - կաճառ
Ռեալիստականություն - իրապաշտություն
Ժանր - տեսակ, սեռ
Ինտերիեր - ներքին, ներքնամաս
Թեմատիկա - նիւթ, բովանդակություն

Դիմանկարային ժանրում նկարչի գործերն արտահայտչական են հատկապես

գեղարվեստական եռթյամբ, որտեղ, երբեմն, դիմագծերը բացակայում կամ աղոտ են ներկայացվում, բայց ամբողջության մեջ՝ կերպարի դիրք ու շարժման ընկալման ու արտահայտման ծիրում, շեշտվում է ոչ թե հերոսի արտաքին, այլ ընդհանրական կերպարը, հոգեբանական եռթյան յուրահատկությունը: Կան նաև դիմանկարներ, որոնք կոնկրետացնում են բնորդին, սակայն, այդ իրողականցումը՝ կերպարին բնորոշ դիմագծերը, շարժումը, նրան հատուկ էական վիճակը ևս, չեն պատճենահանվում, այլ երևակվում են կերպարի գլխավոր հատկանիշների շեշտադրմամբ՝ գունային նուրբ ու թեթև անցումներով:

There are no comments yet.